ՆՇԱԹԵՐԹ
պետական գրանցման
մասին տեղեկությունների

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
Պետական ոչ առեւտրային կազմակերպություն

Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Գրանցված է՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

Աշխատակից՝ Կարինե Պողոսյան

Գրանցման ամսաթիվ՝ 17.02.2014
Գրանցման համար՝ 22.210.799997
ՀՎՀՀ՝ 02625503

Պետական գրանցման մասին տեղեկությունների նշաթերթը էլեկտրոնային եղանակով ձևավորված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից և հանդիսանում է **«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Պետական ոչ առեւտրային կազմակերպություն** նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

Սույն նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը հավաստվում է համակարգի կողմից գեներացված RB9E-7D13-27AE-8ED4 ծածկագրով քաղվածքով, որի իսկությունը և արդիականությունը կարող է ստուգվել փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (e-verify.am):

Կազմված է
«23» հուլիս 2026թ.
Բաղկացած է 19 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
« 23 » հուլիս 2026 թվականի
4290 - Ա հրամանով
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարար՝

_____ Ա. Ավանեսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
17.02.2014 թ.
գրանցման թիվ 222.210.79999
վկայական 03Ա949997
ՀՎՀՀ 02625503
17.02.2014թ. գրանցված
կանոնադրության թիվ 001.
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
17.07.2026 թ.
աշխատակից՝
_____

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

2026թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արագածոտնի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 16.210.00856), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արարատի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 14.210.01129), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արմավիրի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 38.210.01420), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 76.210.00680), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Լոռու մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 26.210.02108), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 11.210.02006), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Շիրակի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 29.210.01906), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային

տեսչության Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 27.210.01105), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Վայոց ձորի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 44.210.00343), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Տավուշի մարզային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 67.210.00736), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 286.210.04796), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Մալաթիա-Սեբաստիայի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00336), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Աջափնյակ և Դավթաշեն տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00337), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Էրեբունի-Նուբարաշենի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00335), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Արաբկիրի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.00334), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Երևանի Շենգավիթի տարածքային փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 269.210.02649), «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Հայկական երկաթուղու

փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 278.210.03546) և «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Մեծամորի փորձագիտական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 222.210.01081), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 273.210.03434), «Ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելման գիտագործնական կենտրոն» (պետական գրանցման համարը՝ 278.210.53255) պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու միջոցով և հանդիսանում է վերջիններիս իրավահաջորդը, որին էլ փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի «Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ և փակ բաժնետիրական ընկերություններ վերակազմակերպելու ու «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1134-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 16.07.2001թ., պետական գրանցման համարը՝ 282.120.04109, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00803072) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակուստիկայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.07.1994թ., պետական գրանցման համարը՝ 269.140.00067, հարկ վճարողի հաշվառման

համարը՝ 02202304) նրանց միացման ճանապարհով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի ««Ա.Բ.Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 1134-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1088-Ն որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «Ա.Բ.Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.12.2002թ., պետական գրանցման համարը՝ 273. 210.03350, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 01504981) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.02.2014թ., պետական գրանցման համարը՝ 222. 210.799997, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02625503) միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

2. Պետական կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. Պետական կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Պետական կազմակերպության կառավարման լիազորված մարմինն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Լիազորված մարմին), որն ունի Պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

6. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Պետական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական և միջազգային առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

9. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

11. Պետական կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայրեն կրճատ՝ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ «Национальный Центр по контролю и профилактике заболеваний» Государственная некоммерческая организация

ռուսերեն կրճատ՝ «Национальный центр КПЗ» ГНО

անգլերեն լրիվ՝ «National Center of Disease Control and Prevention» State Noncommercial Organization

անգլերեն կրճատ՝ «National CDC» SNCO

12. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0025, Մխիթար Հերացի 12:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Պետական կազմակերպության հիմնական գործունեության առարկան և նպատակներն են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության բնագավառում հանրային առողջության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն՝

1) հանրային առողջության ապահովմանը, հանրության (մարդու) առողջության ամրապնդմանը, հանրության (մարդու) առողջության պահպանման համար բարենպաստ շրջակա միջավայրի ստեղծմանը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների (այսուհետ՝ հիվանդություններ) կանխարգելմանը, վթարների, տարերային աղետների հետևանքների նվազեցմանն ու վերացմանը ուղղված միջոցառումների ծրագրումը և իրականացումը.

2) համաճարակաբանական դիտարկման կազմակերպումը և իրականացումը.

3) հիվանդությունների կանխարգելման կազմակերպումը և իրականացումը.

4) հանրության (մարդու) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, ինչպես նաև հիվանդությունների առաջացման, տարածման, կանխման ու վերացման նպատակով, իր իրավասությունների շրջանակներում հանրային առողջապահական նորմատիվներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումների իրականացումը.

5) համաճարակաբանական հետազոտության (հետախուզության) իրականացումը.

6) հիվանդությունների վարչական վիճակագրական հաշվառման իրականացումը.

7) սննդամթերքի օգտագործման հետ կապված՝ մարդու առողջության վրա վնասակար ազդեցության ռիսկի գնահատումը, առաջարկությունների մշակումը և իրավասու մարմիններին դրանց ներկայացումը.

8) սննդային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների ի հայտ գալու դեպքում դրանց առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը, նմուշառման և լաբորատոր հետազոտությունների իրականացումը, սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման նպատակով կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը, սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին առաջարկությունների ներկայացումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան.

9) հանրության (մարդու) առողջության անվտանգությունն ապահովելու, հանրության (մարդու) առողջության վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր ազդեցությունը բացառելու, հիվանդությունների առաջացումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ներառյալ հանրային առողջապահական նորմատիվների պահանջների համաձայն շրջակա միջավայրի մշտադիտարկման իրականացումը՝ իր իրավասությունների շրջանակներում.

10) հանրային իրազեկման, բժշկական ու հանրային առողջապահական գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության ապահովումը.

11) ատոմային էներգետիկայի, շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումներ և հոսքեր, ֆիզիկական գործոնների աղբյուրներ ունեցող օբյեկտների, ինչպես նաև էկոլոգիական աղետի կարգավիճակ ունեցող գոտիներում օբյեկտների տեղաբաշխման, վերակառուցման և ընդունման, նախադեպ չունեցող նոր տեխնոլոգիաների ներդրման, նախատեսվող գործունեության, հիմնադրույթային փաստաթղթերի ու կառույցների նախագծերի փորձաքննության իրականացումը՝ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրությամբ և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով նախատեսված դեպքերում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և եզրակացության տրամադրումը.

12) Իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը և համակարգումը՝ իր իրավասությունների շրջանակում.

13) համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումների իրականացումը և խորհրդատվության տրամադրումը.

14) հանրային առողջապահության ոլորտում կենսապահովության և կենսանվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը՝ իր իրավասությունների շրջանակում.

15) հանրային առողջապահության ոլորտի իրավական ակտերի, ծրագրերի նախագծերի մշակմանը մասնակցությունը.

16) գիտատեխնոլոգիական գործունեության իրականացումը.

17) վարակիչ հիվանդությունների օջախներում, որտեղ առկա են վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման համար պայմաններ, ախտահանման, միջատազերծման, կրծողազերծման իրականացումը.

18) օրենքով նախատեսված սահմանային այլ վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու նպատակով պետական սահմանի անցման կետերում ժամանակավորապես տեղակայված օրենքով վերահսկողություն կամ հսկողություն իրականացնելու գործառույթ իրականացնող այլ պետական մարմինների կողմից իրականացվող աշխատանքներին մասնակցությունը՝ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներին օժանդակության մասով.

19) համաճարակների, համավարակների, բռնկումների, թունավորումների և հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակ ներկայացնող իրադարձություններին պատրաստվածության և արձագանքման (ներառյալ պահուստային պաշարների ապահովում, արագ արձագանքման թիմի ձևավորում և պատրաստվածություն, տրանսպորտի և այլ նյութական ռեսուրսների ապահովում, վարժանքների մասնակցություն) ապահովումը.

20) բժշկական օգնության և սպասարկման ընթացքում ձեռք բերված վարակների հայտնաբերմանն և կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացումը.

21) հանրային առողջության ապահովման նպատակով անհրաժեշտ առաջարկությունների մշակումը և պետական մարմիններին, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ներկայացումը.

22) միջազգային պայմանագրերով և միջազգային կազմակերպություններին անդամակցությամբ պայմանավորված՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության բնագավառում պետության ստանձնած պարտավորությունները կատարելու աշխատանքներին մասնակցությունը, Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի լիազորությունների ապահովման աշխատանքների, այլ պետությունների, միջազգային և բարեգործական կազմակերպությունների հետ սահմանված կարգով համագործակցության իրականացումը՝ իր իրավասությունների սահմաններում.

23) վրահուղարկավորում և վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության կամ անհնարինության մասին եզրակացությունների տրամադրումը:

14. Պետական կազմակերպությունը, որպես ձեռնարկատիրական գործունեության տեսակներ, իրականացնում է.

1) հանրային առողջության պահպանման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով փորձաքննությունների՝ ներառյալ գիտական և Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերով սահմանված փորձաքննությունների, ինչպես նաև ուսումնասիրությունների, վերլուծությունների, գնահատումների, լաբորատոր հետազոտությունների և գործիքային չափումների իրականացում.

2) շենքերի, շինությունների, կառույցների, կառուցվածքների, արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, գործունեության տեսակների, շրջակա ու բնակության միջավայրի գործոնների հանրային առողջապահական նորմատիվների պահանջներին համապատասխանությունը հավաստելու վերաբերյալ հանրային առողջապահական փորձաքննության իրականացում և եզրակացության տրամադրում.

3) ախտահանման, միջատազերծման և կրծողազերծման աշխատանքների իրականացում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անընկալունաբանական (իմունականխարգելիչ) և շարժական անընկալունաբանական (իմունականխարգելիչ) տեսակներով, խորհրդատվության տրամադրում.

5) շրջակա միջավայրի և ակուստիկ գործոնների (աղմուկ, վիբրացիա, ուլտրաձայն, ինֆրաձայն) հետազոտում և հիգիենիկ բնութագրում, կանխարգելիչ միջոցառումների մշակում և իրականացում.

6) հակաբիոտիկների և ախտահանիչ նյութերի նկատմամբ ախտածին մանրէների զգայունության որոշում.

7) մասնագիտական նյութերի թարգմանություն, խմբագրում, ձևավորում, մասնագիտական նյութերի վերաբերյալ կարծիքի տրամադրում.

8) հանրային առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառական հետազոտությունների, փորձարարական մշակումների իրականացում.

9) հակաբիոտիկների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում կիրառվող և նոր ներդրվող ախտահանիչ նյութերի արդյունավետության ուսումնասիրությունների իրականացում.

10) հանրային առողջապահության ոլորտին վերաբերող սեմինարների, համաժողովների կազմակերպում.

11) աշխատանքի հիգիենայի ծառայությունների մատուցում.

12) արտադրական հսկողության իրականացում.

13) ուսուցման (այդ թվում՝ սննդարդյունաբերության, առևտրի և հանրային սննդի կազմակերպությունների, ջրային կառույցների, բուժական և կանխարգելիչ կազմակերպությունների, ինչպես նաև մանկական դաստիարակչական բնագավառների աշխատողների շրջանում նվազագույն հանրային առողջապահական գիտելիքների ուսուցման), վերապատրաստումների և շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագրերի իրականացում:

15. Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

16. Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով, հիմնադրի որոշման հիման վրա, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, Լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Գլխավոր տնօրենը:

18. Լիազորված մարմինն իրականացնում է Պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

19. Լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է Պետական կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

2) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

3) իրականացնում է վերահսկողություն Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ.

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Պետական կազմակերպության Գլխավոր տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

5) լսում է Պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) իրականացնում է վերահսկողություն Պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) վերահսկողություն է իրականացնում Պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

8) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս Պետական կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

9) հաստատում է Պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

10) հաստատում է Պետական կազմակերպության հաստիքացուցակը.

11) հաստատում է Պետական կազմակերպության կանոնադրությունը կամ դրա փոփոխությունները.

12) ուսումնասիրում է Պետական կազմակերպության կողմից ներկայացված Պետական կազմակերպության կանոնադրությունում, հաստիքացուցակում, եկամուտների և ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները և նպատակահարմարության դեպքում ընդունում դրանք և կատարում համապատասխան փոփոխություններ.

13) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Պետական կազմակերպության Գլխավոր տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) Լիազորված մարմնի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Գլխավոր տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Պետական կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, Պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

22. Գլխավոր տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Պետական կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված գույքային վնասի

համար: Գլխավոր տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

23. Գլխավոր տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

24. Գլխավոր տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Պետական կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, Լիազորված մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Պետական կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է Պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) սահմանում է Պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

8) հաստատում է Պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

9) Նշանակում է Պետական կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

25. Պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների արդյունավետ իրականացման համար Գլխավոր տնօրենին կից կարող է ձևավորվել խորհրդակցական մարմին՝ խորհուրդ:

26. Խորհուրդը ձևավորվում է և խորհրդի կազմը, աշխատակարգը հաստատվում է Գլխավոր տնօրենի հրամանով:

27. Լիազորված մարմնի ղեկավարը, Պետական կազմակերպության Գլխավոր տնօրենը, նրա տեղակալները, Պետական կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Պետական կազմակերպության:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

28. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

29. Պետական կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

30. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ

տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

31. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ Պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

32. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Պետական կազմակերպությունը:

33. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

34. Պետական կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման (աուդիտի)՝ Լիազորված մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:

35. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:

36. Հիմնադիրը կարող է Պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

37. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

38. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ:

39. Պետական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

40. Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

41. Հիմնադրի կողմից Պետական կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

42. Հիմնադրի կողմից Պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և (կամ) պարտադիր պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ Պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

44. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

45. Պետական կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

46. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

47. Պետական կազմակերպության լուծարման դեպքում Պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: